"НАЦИОНАЛЬНЫЙ АКАДЕМИЧЕСКИЙ ТЕАТР
ОПЕРЫ И БАЛЕТА им. А.СПЕНДИАРЯНА"
ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ

ALEXANDER SPENDIARIAN OPERA AND BALLET
NATIONAL ACADEMIC THEATRE,
NON-COMMERCIAL STATE ORGANIZATION

«Ա.ՍՊԵՆԴԻԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՎ ԲԱԼԵՏԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

# ՀՐԱՄԱՆ

N 332 -L

«16» մարտի 2020թ.
ք. Երևան

## ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՄԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԹԱՏՐՈՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 14-ի թիվ 01/33/6354-20 հանձնարարականը և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի պահանջները՝

Հրամայում եմ.

1. 2020 թվականի մարտի 15-ից մինչև 2020 թվականի մարտի 23-ը կասեցնել «Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության, այսուհետ՝ Թատրոն, գործունեությունը:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում նշված ժամանակահատվածում Թատրոն մուտք գործելու իրավունք ունեն միայն Թատրոնի տնօրենի տեղակալները, Թատրոնի տնօրենի կամ նրա տեղակալների կողմից թույլտվություն ստացած անձինք, ինչպես նաև համապատասխան էլեկտրատեխնիկական, սան-տեխնիկական ու անվտանգության ծառայությունների աշխատակիցները՝ աշխատանքային գրաֆիկի համաձայն:

3. Հանձնարարել Թատրոնի տնօրենի տեղակալներին՝ Թատրոնի գործունեության կասեցման ժամանակահատվածում ապահովել հրդեհային, սանիտարական ու այլ անվտանգության կանոնները, ինչպես նաև ուժեղացնել Թատրոնի անվտանգության ծառայության աշխատանքները:

4. Թատրոնի գործերի կառավարչին՝ Թատրոնի գործունեության կասեցման ժամանակահատվածում իրականացնել Թատրոնի շենքի սանիտարական մաքրման ու ախտահանման աշխատանքներ:

5. Սահմանել, որ Թատրոնի վարչական մասի աշխատակիցներն իրենց գործունեությունն իրականացնում են հեռահար մեթոդով, որի ապահովման նպատակով նրանք պարտավոր են աշխատանքային ժամերին մշտապես ապահովել հեռախոսային ու ինտերնատային կապը Թատրոնի ու դրա վարչակազմի ու այլ աշխատակիցների հետ:

6. Սահմանել, որ Թատրոնի գեղարվեստաստեղծագործական կազմի աշխատակիցները ևս իրավունք ունեն հեռահար կերպով իրենց հարցերը ներկայացնել Թատրոնի վարչակազմին:

7. Առաջարկել Թատրոնի գեղարվեստաստեղծագործական կազմի աշխատակիցներին՝ իրենց ստեղծագործական աշխատանքի որակի պահպանման նպատակով զբաղվել ինքնապատրաստմամբ:

8.Ընդհանուր բաժնի պետին՝

ա) հիմք ընդունելով ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 16-ի թիվ 01/21/6382-20 հանձնարարականը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի հանձնարարությամբ՝ ապահովել 24 ժամյա հաղորդակցության հնարավորությունը Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով և այլ հաղորդակցության ուղիներով ու ստացված հաղորդագրություններն անմիջապես էլեկտրոնային հաղորդակցության միջոցներով փոխանցել Թատրոնի տնօրենին, նրա տեղակալներին, ինչպես նաև նշված հաղորդակցության պահանջների ապահովումն իրականացնելու պարտականություններ ունեցող այլ անձանց,

բ) սույն հրամանի մասին իրազեկել Թատրոնի գեղարվեստական ղեկավարի տեղակալին, գլխավոր բալետմայստերին, երգչախմբի գլխավոր խմբավարին, միմանսի ղեկավարին, երիտասարդական օպերային ծրագրի ղեկավարին, նվագախմբի, երգչախմբի, օպերային թատերախմբի վարիչներին, տոմսային տնտեսության վարիչին, գլխավոր ադմինիստրատորին, մարքեթինգի և ՓիԱր բաժնի պետին, անվտանգության ծառայության պետին:

9.Թատրոնի մարքեթինգի և ՓիԱր բաժնի պետին՝ սույն հրամանը հրապարակել Թատրոնի պաշտոնական կայքէջում առանձին բաժնում՝ նշելով ակտի հրապարակման օրը:

10. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի մարտի 14-ի թիվ 01/33/6354-20 հանձնարարականի համաձայն Թատրոնի գործունեության կասեցման ողջ ժամանակահատվածում Թատրոնի բոլոր աշխատողների աշխատավարձերը պահպանվում են:

**Թատրոնի տնօրեն՝** **Հ.Կ. Օրբելյան**

ք. Երևան
«16» մարտի 2020 թ.